ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունվարի 2026 **թվականի** N 3061-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 159/1 ՀԱՍՑԵԻ 418,38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ 27,44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արսեն Հենրիկի Մուրադյանին և Գայանե Ժուլբերտի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2647932 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 159/1 հասցեի բնակելի տան կառուցման ու սպասարկման համար զբաղեցված 418,38 (չորս հարյուր տասնութ ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով 08-001-1181-0127 կադաստրային ծածկագրով հողամասի 27,44 (քսանյոթ ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 159/1 հասցեի բնակելի տան կառուցման ու սպասարկման համար զբաղեցված 418,38 (չորս հարյուր տասնութ ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով 08-001-1181-0127 կադաստրային ծածկագրով հողամասի 27,44 (քսանյոթ ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի